

(77-78) Գետի լայնությունը 5 մ է, միջին խորությունը՝ 80 սմ, ջրի արագությունը՝ 2 մ/վ.

77 Որոշել գետի ծախսը:

## ՄԻԱՄՆԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆ

2013

78 Որոշել գետի հոսքը 3 ժամում:

## ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹՅՈՒՆ

### ԹԵՍՏ 5

Խմբի համարը

Նստարանի համարը

(79-80) Երկրի բնակչության թիվը 90 000 է, բնական աճի գործակիցը՝ 15 ‰: Տարվա ընթացքում ներգաղթը կազմել է 1800 մարդ, արտագաղթը՝ 700 մարդ.

79 Որոշել բնակչության բացարձակ բնական աճը:

80 Որոշել բնակչության թիվը մեկ տարի անց:

### Հարգելի՛ դիմորդ

Առաջադրանքները կատարելիս յուրաքանչյուրից պետք է ընտրել այն տարբերակը, որը Ձեր կարծիքով ճիշտ պատասխանն է, և պատասխանների ձևաթղթի համապատասխան մասում կատարել նշում:


Խորհուրդ ենք տալիս առաջադրանքները կատարել ըստ հերթականության: Ուշադիր կարդացե՛ք յուրաքանչյուր առաջադրանքի պահանջը և պատասխանների առաջարկվող տարբերակները: Եթե Ձեզ չի հաջողվում որևէ առաջադրանքի անմիջապես պատասխանել, ժամանակը խնայելու նպատակով կարող եք այն բաց թողնել և դրան անդրադառնալ ավելի ուշ:

Ձեր առջև դրված թեստ-գրքույկի էջերի դատարկ մասերը ազատորեն կարող եք օգտագործել սևագրության համար: **Թեստ-գրքույկը չի ստուգվում: Ստուգվում է միայն պատասխանների ձևաթուղթը:**

Առաջադրանքները կատարելուց հետո չնոռանաք պատասխանները ուշադիր և խնամքով նշել պատասխանների ձևաթղթում: Պատասխանների ձևաթղթի ճիշտ լրացումից է կախված Ձեր քննական միավորի ճշտությունը:

Ցանկանում ենք հաջողություն:

1 Նկարում Ա տառով նշված է.



- 1) հրաբխի խառնարանը
- 2) մագմային օջախը
- 3) հրաբխի մղանցքը
- 4) լավային հոսքը

2 1 : 80 000 մասշտաբի քարտեզում երկու կետերի միջև հեռավորությունը 6 սմ է: Դրանց միջև իրական հեռավորությունը կլինի.

- 1) 4,8 կմ
- 2) 48 կմ
- 3) 480 կմ
- 4) 4800 կմ

3 Աշխարհագրական լայնությունները լինում են.

- 1) 0°–90°
- 2) 0°–180°
- 3) 0°–270°
- 4) 0°–360°

4 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հունիսի 22–ի կեսօրին Արեգակը լինում է գենիթում հվ. լ. 23° 30' գուգահեռականի վրա:
- 2) Դեկտեմբերի 22–ի կեսօրին Արեգակը լինում է գենիթում հս. լ. 23° 30' գուգահեռականի վրա:
- 3) Մեպտեմբերի 23–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հյուսիսային բևեռային շրջագծի վրա:
- 4) Մարտի 21–ին Արեգակի ճառագայթներն ուղղահայաց են ընկնում հասարակածի վրա:

75 Քարտեզում ՀՀ հողային ո՞ր տիպն է նշված Ա տառով.


- 1) կուլտուր–ռոտզելի հողեր
- 2) անապատակիսաանապատային
- 3) աղուտ–ալկալի հողեր (աղուտներ)
- 4) լեռնային սևահողեր



76 Մարզի ապահովվածությունը ածխի պաշարներով կազմում է 60 տ/մարդ, ածխի պաշարները՝ 2 400 000 տ: Որքան կլինի մարզի բնակչության թիվը:

Քարտեզում ո՞ր ռասայի տարածման շրջաններն են պատկերված Գ տառով.

- 1) նեգրոիդ
- 2) մոնղոլոիդ
- 3) եվրոպեոիդ
- 4) ավստրալոիդ



5

Արտածին ուժերի ազդեցությամբ Երկրի մակերևութային ապարների քայքայման, մանրացման և վերափոխման երևույթը կոչվում է.

- 1) տեղատարում
- 2) լեռնագոյացում
- 3) կուտակում
- 4) հողմահարում

6

Բացարձակ խոնավության հարաբերությունը խոնավության այն քանակին, որն անհրաժեշտ է տվյալ ջերմաստիճանի օդը հագեցնելու համար, կոչվում է.

- 1) առավելագույն խոնավություն
- 2) հարաբերական խոնավություն
- 3) միջին խոնավություն
- 4) նվազագույն խոնավություն

7

Երկու ջրային ավազաններն իրար միացնող ջրային նեղ տարածությունը կոչվում է.


- 1) ծովածոց
- 2) նեղուց
- 3) ծով
- 4) փողրակ

8

Մեծ Արարատի բացարձակ բարձրությունը 5165 մ է, Արարատյան դաշտինը՝ 850 մ: Մեծ Արարատի հարաբերական բարձրությունը կլինի.

- 1) 4315 մ
- 2) 5823 մ
- 3) 4547 մ
- 4) 6015 մ


9 Ո՞ր քամիներն են պատկերված.



- 1) բրիզներ
- 2) պասսատներ
- 3) մուսսոններ
- 4) լեռնահովտային քամիներ

10 Նկարում ո՞ր թվով է նշված օդի ջերմաստիճանի տարեկան ընթացքի կորը հասարակածային լայնություններում.

- 1) 1
- 2) 2
- 3) 3
- 4) 4



11 «Օվկիանոս — ծով» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Խաղաղ — Բարենցի
- 2) Ատլանտյան — Կարայի
- 3) Հնդկական — Կարմիր
- 4) Հյուսիսային սառուցյալ — Բերինգի

70 Արդյունաբերական ձեռնարկությունների արտանետումների հետևանքով առավել աղտոտված բնակավայրեր են.

- 1) Արարատը և Ագարակը
- 2) Ջերմուկը և Դիլիջանը
- 3) Չարենցավանը և Արմավիրը
- 4) Վեդին և Սպիտակը

71 Վառելիքաէներգետիկ ռեսուրսներով աղքատ են.

- 1) Ճապոնիան և Իտալիան
- 2) ԱՄՆ-ը և Մեծ Բրիտանիան
- 3) Ռուսաստանը և Չինաստանը
- 4) Իրանը և Ղազախստանը

72 Հակաերոզիոն միջոցառում չէ.

- 1) հողաբարելավումը
- 2) հողերի վերակուլտիվացիան
- 3) առաջավոր ագրոտեխնիկան
- 4) գենոֆոնդի պահպանումը

73 Կենսաբանական աղտոտիչ է (են).

- 1) վիրբացիան
- 2) բակտերիաները
- 3) ջերմությունը
- 4) էլեկտրամագնիսական դաշտը

65 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) ՀՀ անտառների վերին և մերձալպյան գոտու մարգագետինների ստորին սահմանների միջև տարածվում են չորասեր նոսր անտառները:
- 2) ՀՀ մերձալպյան և ալպյան լանդշաֆտներում բարձր է Արեգակի ճառագայթային էներգիայի ինտենսիվությունը (ուժգնությունը):
- 3) ՀՀ կուլտուր-ոռոգելի հողերը տարածվում են սևահողային տափաստանների ենթագոտում:
- 4) ՀՀ անապատակիսաանապատային լանդշաֆտներն առաջացել են Արարատյան գոգավորությունում և Վայքում անտառների անխնա ոչնչացման հետևանքով:

66 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Տարվա ընթացքում ամպամած օրերի թիվը ամենաքիչը Մարտունիում է:
- 2) ՀՀ-ում ամենաբարձր ջերմաստիճանը (42°) գրանցվել է Արարատյան դաշտում (Երասխ):
- 3) ՀՀ-ում ամենաշատ տեղումներ թափվում են Արագած և Կապուտջուղ լեռնագագաթներին:
- 4) ՀՀ-ում գրանցված ամենացածր ջերմաստիճանը -42,6°C է:

67 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) ՀՀ-ն, իր հարևանների համեմատ, ամենացածր ուրբանիզացման մակարդակ ունեցող երկիրն է:
- 2) ՀՀ ազգային փոքրամասնություններից են արաբները և ադրբեջանցիները:
- 3) ՀՀ բնակչության ամենամեծ խտության ցուցանիշով առանձնանում է Սևանի ավազանը:
- 4) ՀՀ մշտական բնակչության վերին սահմանը 2400 մ է:

68 **ՀՀ արդյունաբերության վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Մեքենաշինության զարգացումը պայմանավորված է սև մետաղների առկայությամբ:
- 2) Վառելիքային հաշվեկշռում ամենամեծ բաժինն ունի բնական գազը:
- 3) Քիմիական արդյունաբերության խոշոր կենտրոններ են Հրազդան և Գյումրի քաղաքները:
- 4) Այլումինի արդյունաբերությունը բացառապես օգտագործում է տեղական հումք՝ Թեժ լեռան և Շվանիձորի (Մեղրու լեռնաշղթա):

69 **Ի՞նչն է ընդհանուր Գյումրի և Հրազդան քաղաքների համար.**

- 1) երկաթուղային հանգույցներ են
- 2) արդյունաբերության առաջատար ճյուղը պղնձաձուլությունն է
- 3) գործում են հզոր ջերմաէլեկտրակայաններ
- 4) գործում են ցեմենտի արտադրության խոշոր ձեռնարկություններ

12 **Ո՞ր բնական գոնային է բնորոշ ավելցուկային խոնավությունը.**

- 1) սավաննաների և նոսր անտառների
- 2) անապատների և կիսաանապատների
- 3) տունդրայի
- 4) բարեխառն գոտու տափաստանների

13 **Բնութագրումով որոշել լիճը.**

*Ամուղարյա և Միրդարյա գետերը թափվում են մնացորդային ծագման այդ լճի մեջ: Այդ գետերի ջրերը ոռոգման նպատակով օգտագործելու պատճառով լիճը ծանծաղել է: Ո՞ր լիճն է.*

- 1) Արայան
- 2) Բալխաշ
- 3) Կասպից
- 4) Իսիկ Կուլ

14 **Ո՞ր պնդումն է սխալ.**

- 1) Ավստրալիայի ներքին՝ ընդարձակ շրջանները (տարածքի 60 %-ը) հոսք չունեն դեպի օվկիանոս:
- 2) Ներքին շրջանների գետերը մշտական հոսք չունեն, և այստեղ շատ են չոր գետահունները՝ քրիկները:
- 3) Կենտրոնավստրալական դաշտավայրի տարածքում է ստորերկրյա ջրերի Մեծ արտեզյան ավազանը:
- 4) Ավստրալիայի ամենախոշոր հոսուն լիճը Էյրն է:

15 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**

- 1) Մայրցամաքային և օվկիանոսային երկրակեղևների կառուցվածքը նույնն է:
- 2) Երկրակեղևի ամենաակտիվ, երկրաշարժավտանգ գոտիները գեոսինկլինային շրջաններն են:
- 3) Քարոլորտի սալերի և մայրցամաքների սահմանները ճշգրտորեն համընկնում են:
- 4) Քարոլորտի սալերի իրար մոտենալու և սեղմվելու հետևանքով առաջանում են ընդարձակ հարթավայրեր:

16 **«Ծով — կղզի» գույգերից ընտրել ճիշտը.**

- 1) Արաբական ծով — Շրի Լանկա կղզի
- 2) Կարիբյան ծով — Նյուֆաունդլենդ կղզի
- 3) Ադրիատիկ ծով — Կոբսիկա կղզի
- 4) Օխոտի ծով — Սախալին կղզի


17 «Հարթավայր — աշխարհամաս» գույգերից ընտրել ճիշտը.

- 1) Մեծ ավազան սարահարթ — Ավստրալիա և Օվկիանիա
- 2) Թուրանի դաշտավայր — Ասիա
- 3) Մերձատլանտյան դաշտավայր — Աֆրիկա
- 4) Արաբական սարահարթ — Եվրոպա

18 Միջերկածովային կլիման բնորոշ է.

- 1) Հնդստան թերակղզու ներքին շրջաններին
- 2) Հարավային Ամերիկայի բարեխառն գոտու արևելյան մասերին
- 3) Ֆլորիդա թերակղզուն
- 4) Աֆրիկայի ծայր հյուսիսային մասերին

19 Ո՞ր անապատն է քարտեզում նշված Գ տառով.



- 1) Գոբի
- 2) Թար
- 3) Տակլա-Մական
- 4) Կարակում

20 Ո՞ր պետությունն է քարտեզում նշված Ե տառով.

- 1) Թուրքմենստան
- 2) Ուզբեկստան
- 3) Ղազախստան
- 4) Տաջիկստան

61 Մեքենաներ և սարքավորումներ արտահանող առաջատար երկիր է.

- 1) Ռուսաստանը
- 2) Կանադան
- 3) Գերմանիան
- 4) Ավստրալիան

62 Ճապոնիայի վերաբերյալ ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Երկրի արդյունաբերությունը գերազանցապես աշխատում է սեփական հումքային և վառելիքային ռեսուրսների հաշվին:
- 2) Այլումինի, պղնձի, ցինկի ձուլարանները հիմնականում տեղաբաշխված են մետաղների խտանյութի ներկրման նավահանգիստներում:
- 3) Գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքում մեծ է անասնապահության բաժինը:
- 4) Հացահատիկային գլխավոր մշակաբույսը ցորենն է:

63 Բնութագրումով որոշել պետությունը.

*Այս պետությունն անմիջական ելք չունի դեպի Համաշխարհային օվկիանոս: Հարուստ է նավթի ու բնական գազի պաշարներով: Բնակչությունը հիմնականում պատկանում է ալթայյան լեզվաընտանիքի թյուրքական լեզվախմբին և դավանում մահմեդականության շիա ուղղությունը: Գյուղատնտեսական հիմնական մշակաբույսերն են բամբակենին, թեյը: Ո՞րն է այդ պետությունը.*

- 1) Վրաստանը
- 2) Ադրբեջանը
- 3) Թուրքիան
- 4) Իրանը

64 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Հայկական լեռնաշխարհը պատկանում է միայն Սև և Միջերկրական ծովերի ավազաններին:
- 2) Արաքսն ունի սառցադաշտային սնում:
- 3) Հայկական լեռնաշխարհի գետերն ունեն մեծ անկում:
- 4) Տիգրիսը պատկանում է Կասպից ծովի ավազանին:

56 Հյուսիսից հարավ շարժվելիս բարեխառն գոտու անտառների զոնան փոխվում է անտառատափաստանների, որովհետև.

- 1) ռելիեֆն աստիճանաբար դառնում է ավելի բարձրադիր
- 2) ձմեռները դառնում են խստաշունչ
- 3) փոխվում է ջերմության և խոնավության քանակը
- 4) հողերը ճահճանում են

57 Աֆրիկայի մերձարևադարձային (միջերկրածովային) մշտականաչ կոշտատերև անտառների և թփուտների բնական զոնայի վերաբերյալ ռ՝ր պնդումն է ճիշտ.

- 1) Բնորոշ են փշոտ բույսերը՝ ուղտափուշը, օշինդրը, աղաբույսը, փշոտ թփերը, անապատային ակացիան, իսկ հարավի անապատներին ու կիսաանապատներին՝ ծիծեռնախոտը, բարձիկանման փշոտ բույսերը և այլն:
- 2) Տարեկան տեղումների քանակը 600–800 մմ է, որոնց մեծ մասը թափվում է ձմռանը, իսկ հողերը դարչնագույն են կամ դեղնակարմրավուն:
- 3) Համատարած խոտածածկույթի հետ աճում են միայնակ ծառեր, որոնցից նշանավոր են բաոբաբը, միմոզան, հովհարաձև ակացիան, չորադիմացկուն արմավե նին և այլն:
- 4) Տարածվում է հասարակածի երկու կողմերում՝ ընդգրկելով Գվինեական ծովածոցի մերձափնյա շրջանները և Կոնգո գետի միջին հոսանքի ավազանը:

58 Ո՞ր շարքի բոլոր աշխարհագրական օբյեկտներն են Եվրասիայում.

- 1) Դեկանի սարահարթ, Էրեբուս լեռ, Լադոգա լիճ
- 2) Միջինդանուբյան դաշտավայր, Օրիսաբա հրաբուխ, Բալխաշ լիճ
- 3) Մեծ Ավազան սարահարթ, Վերխոյանսկի լեռներ, Վերին լիճ
- 4) Չինական մեծ հարթավայր, Զագրոսի լեռներ, Վենեոն լիճ

59 Դեպի ծով ելք չունեն.

- 1) Վիետնամը և Օմանը
- 2) Տաջիկստանը և Մոնղոլիան
- 3) Պերուն և Բոլիվիան
- 4) Սուդանը և Անգոլան

60 Ո՞ր պնդումն է սխալ.

- 1) Բնակչության վերարտադրության առաջին տիպի երկրներին բնորոշ է ցածր ծնելիությունը, ցածր մահացությունը և ցածր բնական աճը:
- 2) «Ժողովրդագրական պայթյունը» բնակչության թվի կտրուկ աճն է և բնորոշ է զարգացող երկրներին:
- 3) Բնակչության վերարտադրության ցուցանիշների վրա առավել մեծ ազդեցություն են թողնում սոցիալ-տնտեսական գործոնները:
- 4) Բնակչության վերարտադրության ամենաբարձր տեմպերը նկատվում են եվրոպական երկրներում:

21 Քաղաքային և գյուղական բնակավայրերի խոշոր կուտակումը մեծ քաղաքի կամ քաղաքների շուրջը, որոնք միմյանց հետ կապված են աշխատանքային, մշակութային, կենցաղային, արտադրական և այլ կապերով, կոչվում է.

- 1) միգրացիա
- 2) ագլոմերացիա
- 3) ուրբանիզացիա
- 4) ասիմիլյացիա

22 Բնակչության վայրի ժամանակավոր կամ մշտական փոփոխության հետ կապված բնակչության տեղաշարժը կոչվում է.

- 1) տարաբնակեցում
- 2) բնակչության միգրացիա
- 3) բնակչության տեղաբաշխում
- 4) բնակչության բնական շարժ

23 Բնութագրումով որոշել պետությունը.

*Այս պետությունը հյուսիսից սահմանափակված է Հիմալայան և Կարակորում լեռնաշղթաներով: Բնակչությունը բազմազգ է և բազմակրոն: Խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակով, թեյի մշակությամբ աշխարհի առաջատարներից է: Ո՞րն է այդ պետությունը.*

- 1) Հնդկաստանը
- 2) Չինաստանը
- 3) Պակիստանը
- 4) Ինդոնեզիան

24 Որոշել երկրի բնակչության թիվը, եթե այդ երկրի գյուղատնտեսական հողահանդակների ընդհանուր մակերեսը 15 մլն հա է, իսկ մեկ բնակչին բաժին է ընկնում 3 հա գյուղատնտեսական հողահանդակ.

- 1) 18 մլն
- 2) 5 մլն
- 3) 12 մլն
- 4) 2 մլն

25 «Ժողովուրդ — լեզվախումբ» գույգերից ո՞րն է սխալ.

- 1) ուզբեկներ — թուրքական
- 2) պարսիկներ — իրանական
- 3) լեհեր — սլավոնական
- 4) քրդեր — թուրքական

26 «Պետություն — կառավարման ձև» գույգերից ընտրել *սխալը*.

- 1) Իրան — հանրապետություն
- 2) Նիդերլանդներ — հանրապետություն
- 3) Օման — միապետություն
- 4) Շվեդիա — միապետություն

27 «Արդյունաբերության ճյուղ — տեղաբաշխման գործոն» գույգերից ընտրել *ճիշտը*.

- 1) այլումինաձուլություն — սպառման գործոն
- 2) ռոբոտաշինություն — հումքային գործոն
- 3) գյուղատնտեսական մեքենաշինություն — վառելիքաէներգետիկ գործոն
- 4) թեթև արդյունաբերություն — աշխատանքային ռեսուրսների գործոն

28 Մեծ Բրիտանիայի վերաբերյալ *ո՞ր* պնդումն է *սխալ*.

- 1) Բարձր է բնակչության խտությունը:
- 2) Բնակչության կազմում մեծ է աշխատունակ բնակչության բաժինը:
- 3) Բնակչության մեծ մասը դավանում է քրիստոնեության կաթոլիկ և բողոքական ուղղությունները:
- 4) Ըստ պետական կարգի՝ բացարձակ միապետություն է:

29 Նոսր բնակեցված երկրներ են.

- 1) Ավստրալիան և Կանադան
- 2) Գերմանիան և Ֆրանսիան
- 3) Ինդոնեզիան և Ճապոնիան
- 4) Հայաստանը և Բելգիան

30 Թերակղզային երկրներ են.

- 1) Նորվեգիան և Կիպրոսը
- 2) Դանիան և Իռլանդիան
- 3) Իտալիան և Իսպանիան
- 4) Թուրքիան և Իրանը

31 «Մշակաբույս — առաջատար երկիր» գույգերից ընտրել *ճիշտը*.

- 1) բամբակենի — Լեհաստան
- 2) սուրճ — Կոլումբիա
- 3) խաղող — Բելգիա
- 4) ցորեն — Նորվեգիա

## Բ մակարդակ

51 Ո՞ր պնդումն է *ճիշտ*.

- 1) Գլոբուսի վրա բոլոր միջօրեականներն իրար հավասար են:
- 2) Հս. լ. 66° 30՛ գուգահեռականի վրա գիշերահավասարի երևույթը տարվա մեջ նկատվում է մեկ անգամ՝ դեկտեմբերի 22-ին:
- 3) Տվյալ պահին նույն միջօրեականի վրա գտնվող վայրերում, կախված դրանց աշխարհագրական լայնությունից, գրանցվում են տարբեր տեղական ժամանակներ:
- 4) Բնեռային շառավիղը մեծ է հասարակածային շառավղից:

52 Ժամը քանի՞ սը կլինի 7-րդ ժամային գոտում, եթե 4-րդ ժամային գոտում ժամը 15<sup>00</sup>-ն է.

- 1) 11<sup>00</sup>
- 2) 15<sup>00</sup>
- 3) 18<sup>00</sup>
- 4) 23<sup>00</sup>

53 Ո՞ր պնդումն է *ճիշտ*.

- 1) Պասսատները տեղումներ են առաջացնում մայրցամաքների արևմտյան ափերին:
- 2) Մուսսոնային շրջաններում տեղումների մեծ մասը թափվում է ամռանը:
- 3) Տոռնադոն և թայֆունը արևադարձային հզոր անտիցիկլոններ են:
- 4) Կլիմայի ցամաքայնության մեծացմանը զուգընթաց ամռան միջին ջերմաստիճանը նվազում է:

54 Ընտրել բնության բաղադրիչների միակ *ճիշտ* գուգորդումը.

- 1) Հյուսիսային Ամերիկա — Յուկոն — Հյուսիսային սառուցյալ օվկիանոս
- 2) Եվրասիա — Դանուբ — Խաղաղ օվկիանոս
- 3) Աֆրիկա — Օրանժ — Ատլանտյան օվկիանոս
- 4) Ավստրալիա — Մուրեյ — Խաղաղ օվկիանոս


55 Ո՞ր շարքի բոլոր կղզիները նույն օվկիանոսում *չեն*.

- 1) Շախբերգեն, Նոր Երկիր, Հյուսիսային երկիր
- 2) Հոնայու, Կալիմանտան, Շրի Լանկա
- 3) Իսլանդիա, Իռլանդիա, Մեծ Բրիտանիա
- 4) Թայվան, Սախալին, Ֆիլիպինյան



49 Ո՞ր լեռներն են քարտեզում նշված **Բ** տառով.

- 1) Վիրահայոց
- 2) Բազումի
- 3) Եղնախաղի
- 4) Շիրակի



50 Ո՞ր քաղաքն է քարտեզում նշված **Է** տառով.

- 1) Ճամբարակ
- 2) Բերդ
- 3) Դիլիջան
- 4) Իջևան

32 Ո՞ր պնդումն է ճիշտ.

- 1) Մանր եղջերավոր անասնապահությունը հիմնականում տեղաբաշխված է չորային կլիմա ունեցող և լեռնային շրջաններում:
- 2) Խոզերի գլխաքանակով աշխարհի առաջատար երկիրը Ռուսաստանն է:
- 3) Անգորական այծերի գլխաքանակով աշխարհի առաջատար երկիրը Կանադան է:
- 4) Կակաոյի համաշխարհային բերքի մեծ մասն արտադրվում է Հարավային Եվրոպայի երկրներում:

33 Կյանքի առավել ցածր միջին տևողություն ունեն.

- 1) Ավստրիան և Բելգիան
- 2) Նիդերլանդները և Դանիան
- 3) Մոզամբիկը և Զամբիան
- 4) Ավստրալիան և Կանադան

34 Էներգետիկական հաշվեկշռում ջրէկների առավել մեծ բաժին ունեցող երկրներ են.

- 1) Ուկրաինան և ԱՄՆ-ը
- 2) Նորվեգիան և Կանադան
- 3) Չինաստանը և Ֆրանսիան
- 4) Գերմանիան և Ճապոնիան

35 Արևելյան Եփրատի վտակ է.

- 1) Ճորոխը
- 2) Բագրևանդը
- 3) Մակուն
- 4) Խրամը

36 «Գետ — դաշտ» զուգերից ընտրել սխալը.

- 1) Արևմտյան Եփրատ — Բասենի
- 2) Արևելյան Եփրատ — Մշո
- 3) Արևմտյան Եփրատ — Կարնո
- 4) Արաքս — Նախիջևանի

37 Ո՞ր հարթավայրն է ավելի բարձրադիր.

- 1) Աշոցքի սարահարթը
- 2) Ապարանի սարահարթը
- 3) Արարատյան դաշտը
- 4) Շիրակի դաշտը

- 38 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**
- 1) Անտառները զբաղեցնում են ՀՀ տարածքի մոտ 10%-ը և զբաղեցնում են ՀՀ հյուսիսարևելյան և հարավարևելյան շրջանները:
  - 2) Լեռնաչորասեր բուսականությունը տարածվում է տափաստանային և անտառային բուսականության միջև:
  - 3) Անապատային-կիսաանապատային բուսականությունը տարածվում է 1200–1500մ բարձրությունների միջև:
  - 4) Ալպյան և մերձալպյան բուսականությունը տարածվում է 1500–2200 մ բարձրությունների միջև:

- 39 **Ո՞ր պնդումն է ճիշտ.**
- 1) ՀՀ–ում թվաքանակով երկրորդ ազգը ռուսներն են:
  - 2) ՀՀ–ում եզդիները հիմնականում բնակվում են Արագածոտնի մարզի քաղաքային բնակավայրերում:
  - 3) ՀՀ–ն ազգային կազմով աշխարհի առավել միատարր պետություններից է:
  - 4) ՀՀ–ում ռուսները հիմնականում բնակվում են Արմավիրի մարզի քաղաքային բնակավայրերում:

- 40 **ՀՀ արդյունաբերության առաջատար ճյուղ չէ.**
- 1) գունավոր մետաղաձուլությունը
  - 2) էլեկտրաէներգետիկան
  - 3) ավտոմոբիլաշինությունը
  - 4) շինանյութերի արդյունաբերությունը

- 41 **Ո՞ր բնական լանդշաֆտն է տիրապետում Արմավիրի մարզում.**
- 1) տափաստանային
  - 2) չոր տափաստանային
  - 3) կիսաանապատային
  - 4) անտառային

- 42 **Արագածոտնի մարզի սննդի արդյունաբերության առաջատար արտադրություններն են.**
- 1) գինու և կաթնամթերքի
  - 2) ծխախոտի և շաքարի
  - 3) ձեթի և մսամթերքի
  - 4) հանքային ջրերի և պահածոների

- 43 **Ո՞ր բարձրությունն է պտղաբուծության տարածման վերին սահմանը.**
- 1) 1000 մ
  - 2) 1400 մ
  - 3) 2100 մ
  - 4) 2500 մ

- 44 **Ո՞ր երկիրն է համեմատաբար աղքատ անտառային ռեսուրսներով.**
- 1) Ինդոնեզիան
  - 2) Իսպանիան
  - 3) Բրազիլիան
  - 4) Ռուսաստանը

- 45 **Հողերի աղակալման պատճառ է.**
- 1) գրունտային ջրերի մակարդակի բարձրացումը
  - 2) խորքային վարը
  - 3) անտառապատ տարածքների կրճատումը
  - 4) սելավային հոսքերը

- 46 **Իրենց բաղադրության մեջ պարունակվող տարբեր նյութերի միջոցով մարդու օրգանիզմի վրա ցավազրկող, հանգստացնող, հակաբորբոքային ազդեցություն են ունենում.**
- 1) դեկորատիվ բույսերը
  - 2) դեղաբույսերը
  - 3) կերաբույսերը
  - 4) տեխնիկական բույսերը

- 47 **Ո՞րն է մթնոլորտի մաքրության պահպանման միջոցառումներից.**
- 1) քիմիական ձեռնարկությունների թվի ավելացումը
  - 2) ցեմենտի արտադրության ավելացումը
  - 3) ջերմային էլեկտրակայանների թվի ավելացումը
  - 4) կանաչ տարածքների ընդարձակումը

- 48 **Այն հիմնախնդիրները, որոնք ընդգրկում են ամբողջ երկրագունդը և մարդկությունը, սպառնում են նրանց ներկային ու ապագային՝ պահանջելով բոլոր ժողովուրդների ու երկրների գործողությունների միասնությունը, կոչվում են.**
- 1) տարածաշրջանային
  - 2) տեղական
  - 3) բնական
  - 4) համամոլորակային